ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Վարկ 3284-ARM (ԱԶԲ) «Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»
ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ (CQS)
Հետաքրքրվածության արտահայտման հրավեր (ՀԱՀ)

26 հուլիսի 2022թ.

Վարկի համարը՝ 3284-ARM (ԱԶԲ) «Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»

Առաջադրանքի անվանումը՝ ՀՀ Արարատի մարզի Մասիսի թիվ 3 հիմնական դպրոցի կառուցման նախագծի մշակում և նախագծի կառուցման հեղինակային հսկողության իրականացում

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ **APD-40**

Վերջնաժամկետ՝ 2022թ. օգոստոսի 9-ը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստացել է վարկ Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) «Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը» (Ծրագիր) իրականացնելու նպատակով: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) Ծրագրի իրականացնող գործակալությունն է և մտադիր է այդ վարկային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը («Պատվիրատու») նշված Ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին («Խորհրդատուներ») ներկայացնելու հետաքրքրվածության հայտեր: Նորակառույց և վերակառուցվող դպրոցների պատշաճ նախագծման և վերահսկման համար ֆինանսական միջոցներ կհատկացվեն տեղական խորհրդատուներին՝ ծրագրի ճարտարապետաշինարարական փաստաթղթերի մշակման, ինչպես նաև շինարարական աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողություն իրականացնելու նպատակով:

Խորհրդատուի հետ կկնքվի երկու առանձին պայմանագիր:
1. Փուլային- նախագծային աշխատանքների համար
2. Ժամանակի վրա հիմնված- դպրոցի հեղինակային հսկողության համար

Նախագծային ծառայությունները կմատուցվեն 180 օրվա ընթացքում: Հեղինակային հսկողության պայմանագրի ժամկետը 28 ամիս է:
Կնքված պայմանագրի սահմաններում կազմակերպությանը կհանձնարարվի **ՀՀ Արարատի մարզի Մասիսի թիվ 3 հիմնական դպրոցի կառուցման նախագծի մշակում և նախագծի կառուցման հեղինակային հսկողության իրականացում:**

Խորհրդատուների կարճ ցուցակի ընտրության չափանիշն է՝
- Ընդհանուր փորձառությունը, առնվազն 5 տարի, այդ ընթացքում նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման հաջողությամբ ավարտված պայմանագրեր, քաղաքացիական շենքերի կառուցման, վերակառուցման նախագծեր – 30 միավոր
- Հատուկ փորձառությունը, վերջին 5 տարում հաջողությամբ ավարտված հասարակական շենքերի կառուցման, վերակառուցման նախագծերի պայմանագրեր՝ յուրաքանչյուրը առնվազն 20 մլն դրամ արժողությամբ - 50 միավոր
- Երկրորդ որակավորման չափորոշիչով գնահատված աշխատանքների պայմանագրային գների հանրագումար – 20 միավոր

Հետաքրքրված խորհրդատու ընկերությունները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ (կազմակերպության կանոնադրությունն ու գրանցման վկայականը, հիմնական աշխատակազմի ցանկը, ինչպես նաև վերը նշված որակավորման չափանիշով սահմանված

տեղեկություններ), որոնք կհավաստեն, որ կազմակերպությունը ունի պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար: **Աշխատակազմի աշխատանքային ինքնակենսագրությունը պետք չէ ներկայացնել տվյալ փուլում:**

Խորհրդատու կազմակերպության ընտրությունը կատարվում է որակի հիման վրա ընտրության եղանակով (CQS) համաձայն Ասիական Զարգացման Բանկի և նրա վարկառուների խորհրդատուների վարձման ուղեցույցի (մարտ 2013թ., որը պարբերաբար լրամշակվում է):
Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ համատեղ գործունեության ձևով կամ վարձելով ենթա-խորհրդատու՝ իրենց որակավորումները բարելավելու նպատակով:
Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏԶՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:
Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր ձևով ստորև ներկայացված հասցեով (առձեռն կամ փոստով կամ էլ-փոստով) ոչ ուշ քան **2022թ. օգոստոսի 9-ը, ժամը 17:00**:
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների բաժին, 406 սենյակ,
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60,
էլ-փոստը՝ procurement@atdf.am: